«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018-2019 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 25 մարդ:

Դասախոսական անձնակազմի թիվը՝ 20 մարդ (որից 17-ը կին):

Գիտությունների թեկնածու - 1

4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 4

Ուսումնաօժանդակ կազմը - 4

2018-2019 ուսարվա ընթացքում կնքվել է 14 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 2 հիմնական աշխատող, (պայմանագրի լուծմամբ), իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 1-ը:

- 2018-2019 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է տնօրենի համապատասխան հրաման:
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - դասախոսական կազմ՝ 35 աշխատանքային օր,
  - տնօրեն, ուսումնական շախատանքների գծով տնօրենի տեղակալ և կադրերի բաժնի վարիչ 25 աշխատանքային օր,
  - կարիերայի ստորաբաժանման պատասխանատու, ուսումնաօժանդակ և հաշվապահ 20 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել, լսվել և հաստատվել է տնօրինական խորհրդի նիստում 29.08.2018թ-ին (արձանագրություն № 1):

Քոլեջում աշխատում են տարիքային 3 թոշակառուներ:

Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:

- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

- Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

  2018-2019 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 39-ը:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:
- Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:
- Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 96 տեղեկանք (աշխատողներին՝ 8, ուսանողներին՝ 88), բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

Կադրերի բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան